իրանց հողը: Ապրում էին նրանք իրանց ամուր բերդերի մէջ, անընդհատ կռիւ էին մղում իրար հետ, քարուքանդ անելով երկիրը: Այդ անվերջ կռիւների մէջ հետզհետէ ուժեղացաւ Իօրիտօմօի ցեղը, որ բոլոր միւս դայմիօսներին յաղթելով ստիպում է ճանաչել իր վերին իշխանութիւնը եւ այսպէս էլ հիմք է դնում սիոգունի (զօրավար) իշխանութեանը: Նա իր բնակութիւնը նախ հաստատում է Կամակուրայում, վերջն էլ Իէդօ, եւ դառնում է Ճապոնի իսկական բացարձակ տէրը:



ԴԱՅՄԻՕՍԻ ԱՄՐՈՑԸ

Միկադօն ստիպւում է եղածի հետ հաշտւել. իր կորցրած ոյժը ետ խլելու փորձը բոլորովին անաջող է անցնում. բայց եւ